

ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ազգային արխիվում պահպանված է երգիծարան Լեռ Կամսարի /Արամ Թովմասի Թովմադյան /1888-1965// մեղադրական գործը՝ «Հոյժ գաղտնի» մակագրությամբ /Գործ № 4062/՝

1930-ականներին գրական պայքարը դուրս եկավ գրական շրջանակներից և ձեռք բերեց քաղաքական բնույթ՝ երևույթին բնորոշ բոլոր ողբերգական հետևանքներով, ինչը հատկապես տաղանդավոր գրողների և քննադատների համար ծակատագրական եղավ: Ա. Բակունցը, Վ. Թոթովենցը, Ն. Ստեփանյանը, Պ. Մակինցյանը և այլք գնդակահարվեցին, Չարենցը վախճանվեց Երևանի բանտում, Հ. Սուրխաթյանը, Կ. Միքայելյանը, Զ. Եմալյանը մեռան կես ծանապարհին՝ աքսորավայր չհասած, Գ. Մահարին, Ս. Արմենը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Լեռ Կամսարը և շատ ուրիշներ աքսորվեցին:

«1915թ. ապրիլի 24-ից հետո սա հայ մտավորականության երկրորդ եղեռնն էր,- գրում է գրականագետը,- որ նախաձեռնել ու իրականացնում էր Ստալին-Բերիա ջարդարար մեքենան... Քամուն տրվեց հայ ժողովրդի մտավոր սևահողի վերջին բարեբեր շերտը... Երկիրը տանջամահ անող կասկածամտության քաղցկեղը բազմաժյուղ ու բազմատարած շոշափուկներով ախտահարել էր բոլորին... »²:

Գաղափարական պայքարի ալիքը, սակայն, սկիզբ էր առել դեռևս 30-ական թվականներին, իսկ բարձրակետին հասավ արդեն 1937-ին: Խորհրդային վարչակարգի «բանտային արդյունաբերության» վերլուծաբան-վիպասանը՝ Ալեքսանդր Սոլժենիցինը, իրավացիորեն նկատում է. «Հիմա, երբ նշավակում են պաշտամունքի կամայականությունը, շարունակ ու կրկին հենվում են կարծրացած երեսունյոթ-երեսունութ թվականների վրա: Եվ այնպես է մտապահվում դա, կարծես ոչ մինչև այդ էին նստեցրել, ոչ՝ հետո, այլ միայն երեսունյոթ-երեսունութին: Այնինչ,

¹ Տե՛ս Լեռ Կամսար, Բանտիս օրագիրը, Եր. 2010թ., էջ 59-63:

² Տե՛ս Դ. Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը, Եր., 1994թ., էջ 5,6,12:

չվախենալով սխալվել, ասում են. երեսունյոթ-երեսունուֆի հոսանքը ո՛չ միակն է եղել. ո՛չ նույնիսկ գլխավորը, այլ թերևս լուկ մեկն այն երեք գլխավոր հոսանքներից. որոնք բերնեբերան փռեցել են մեր բանտային կոյուղու դժնի ու գարշահուտ խողովակները»¹: Ի դեպ, «բանտային արդյունաբերություն» արտահայտությունը հենց Սուլժենիցիմինն է, իսկ «ծաղկած փշալարերը»՝ Գուրգեն Մահարունը: Եվ սիբիրյան «ծաղկած փշալարերի» հետևում բանտարկված մնաց մաս մի ամբողջ գրականություն:

30-ականների իրադարձությունները մման են միջնադարյան հավատաքննությանը՝ բովանդակությամբ՝ նույնական, ձևով, սակայն, այլ՝ «գտում» անունով: Ահա թերևս այստեղից էլ սկսեց խոսել Լեռ Կամսարի օրագրային էջերի մասին՝ հնարավորինս համակողմանիորեն:

Լեռ Կամսարի կյանքի այդ շրջանին վերաբերող նյութերը ներկայացված են նրա «Բանտիս օրագիրը» գրքում, որն ամփոփում է երգիծաբանի՝ 1935-1936թթ. երևանի կենտրոնական բանտում «ապրած» օրերը, նաև ձերբակալության հանգամանքների մասին նյութերը, հարցաքննությունների արձանագրությունները: Սակայն այս օրերի ու ապրումների «սաղմերը» հենց 1935-ին չեն ծլարձակել: Լինելով ժամանակի լայնախոհ, սրամիտ և երկաթյա տրամաբանության տեր անձնավորություններից մեկը՝ Լեռ Կամսարը դեռևս 1925-1935թթ. ամփոփող օրագրության մեջ /«Մահապարծ օրագիր»/, ասես նախապատրաստելով ինքն իրեն, բազմիցս խոստովանում է իր հոգեկան տագնապները, երբ ականատեսն է լինում տիրող իրադարձությունների, խոսում է կանխազգացողությունների մասին, որոնք իրավամբ այդպես անվանել սխալ կլինի, քանզի նրա մտորումները իրական հիմքեր ունեին. փաստերը աչքի առջև էին: «Այնքան ընելիք չի մնացեր ինձի այս աշխարհին մեջ, -ասում է երգիծաբանը,-որ վախվխելով փողոց կելնեմ ու ելնելուս ալ ամեն ծանոթին մտովի իրավունք կուտամ, ի տես ինձի, պոռալու զարմացած.

- Այ մարդ, դուն հո՛ս ես...»²: Կամ մեկ այլ տեղում գրողը առավել քան համոզված է. «Մոտ հարյուր հիսուն հոգի խեղձ ու կրակ գյուղացիք, զինված ուժերե պաշարված, պատուհանիս տակեն Չեկա կտարվեին: Սրտակեղեք տեսարան: Կուզեի ցավել այդ բռնվածներու վրա, երբ հանկարծ հիշեցի, որ մեր վիճակն ալ ոչնչով չի տարբերեր անոնցմե: Ցավեմ, վայ թե հանկարծ այդ խեղձերեն մեկը դառնալով ըսե.

¹ «Ծաղկած փշալարերի» ետևում անհատը և մանկությունից ընձադատությունը հայ վիպասանության մեջ, Ս. Արզումանյան, Արդի հայ վեպը, Հատոր 5-րդ, ՀԳՄ հրատ., Եր., 2004թ., էջ 90:

² Լեռ Կամսար, Մահապարծ օրագիր, /1925-1935/, Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2008թ., էջ 155:

- Բնակի՛չք Հայաստանի, մի լացեք ի վերա մեր, այլ լացեք ի վերա ձեզ և որդոց ձերոց...»¹:

Ի՞նչ է նշանակում պատրաստված լինել. սա թերևս անտրամաբանական է հնչում և մարդկայնորեն ոչ ճիշտ, անբացատրելի. որքան էլ մարդն իրեն տրամադրի, այնուամենայնիվ, դժվար թե պատկերացնի այն անմարդկային պայմանները, որին պիտի զոհ գնային եթե ոչ ֆիզիկապես, ապա անպայման հոգեպես ու բարոյապես. նրանց բռնի ուժով ստիպեցին կորցնել ամենաարժեքավորը՝ մարդկային դիմագիծը: Այստեղ տեղին է հիշատակել մի փոքրիկ հատված գրողի բանտային օրագրից. ծառանալով մարդկային դեմքը իսպառ կորցնելուն միտված իրականության դեմ՝ գրողը նախ նկատում է. «Քանի՜ օր է ինքզինքս չեմ տեսեր: Հոս, բանտին մեջ հայելին արգիլված իր է: Ու եթե վաղը՝ հարցաքննությանս, քննիչին կողմե տրված «քեզի կճանչնաս» հարցին «ոչ» պատասխանեմ, պիտի ըսե՝ «սուտ կխոսիս»...»²: Իսկ հայելին արգելելու իմաստը, բնականաբար, այլ էր: Իբր բնավ էլ նկատի չառնելով արգելքի բուն, իրական նպատակը՝ գրողն ավելացնում է. «Եղբա՛յր, հայելի՞՜ ինչու չեն տար մեզի: Եթե իմանամ, թե որքան սև մազ ունիմ գլխիս, ատկե իշխանությանն ի՞նչ վնաս»³: Լեռ Կամսարը բացահայտում էր երկրում տիրող իրավիճակը, գնահատում օր օրի աճող սարսափը և այդ ամենը, մատը սեղմած օրվա զարկերակին, օրեցօր այդ մտորումները թղթին էր հանձնում՝ հասկանալով՝ ոչ ոք անմասն չի մնալու, ինչպես և առաջին հերթին ինքը: Իսկ իր ժամանակը շատ չէր ուշանալու:

1931թ. արդեն սկսվում է գրականության շարքերից նրա «զտումը». որպես «ազգի և հայրենիքի թշնամի» գրողի՝ նրան ազատում են աշխատանքից և փաստորեն դատապարտում սովամահության. այդ պիտակով արդեն նա չէր կարող որևէ ուրիշ աշխատանք գտնել⁴:

«Ձտումը», սակայն, սաստիկ նմանեցավ Հիսուսի դատավարությանը: Փաստն արձանագրում է ինքը՝ երգիծաբանը: Նախագահ Սիմակը 100 տոկոսով Կայիափա քահանայապետն էր: «Խաչ հա՛ն զդա» պոռագող փարիսեցիներն իրենց տեղերում կազմ պատրաստ: Մեկը նրանցից մինչև իսկ պոռաց. «Պետք է ոչնչացնել նրան» /այսինքն՝ ինձ/ և գրավել նրա ունեցվածքը՝ «Ի վերայ պատմութանս վիճակս արկանէին»:

Քրիստոսի Կայիափան ուզեցավ անպայման նրան «թագավոր» դուրս բերել, իմ Կայիափան ինձ «աղա» դուրս բերավ, Թովմաղյան կանչելու տեղ՝ Թովմա-աղայան կանչելով:

¹ Նույն տեղում, էջ 120:

² Լեռ Կամսար, Բանտիս օրագիրը., Եր., 2010թ., էջ 143:

³ Նույն տեղում, էջ 151:

⁴ Լեռ Կամսար, Կարմիր օրեր, Եր., 2000թ., էջ 11:

Միայն ես իսկական Քրիստոսը չէի, ճիշտ է՝ իմ «թագավորությունն էլ» նրա պես այս աշխարհից չէր, բայց ես նրա պես հեզ ու անհիշաչար չէի»։ սա «Բանտիս օրագիրը» գրքում «Մի զտման պատմություն» խորագրով «Արարողությունը» հերթական մասում է¹։ Այնուհետև՝ ձերբակալություն /1935թ./, ձեռագրերի բռնագրավում, հրաժեշտ ընտանիքին... Լեռ Կամսարն էլ մյուսների մասն թերևս մտածում էր, որ միայն մի քանի ժամով կամ օրով պիտի «հյուր լիներ» հարցաքննությունների սենյակում կամ բանտում։

«Ես այն կարծիքին էի, որ օրերով էլ կվերջանա այս պատմությունը, կստուգեն և բաց կթողնեն», - գրում էր Գ. Մահարին։ Սա այն համընդհանուր հոգեբանությունն է, որ փորձությունները հարևանին են։ Մանավանդ, որ ձերբակալությունները սովորական երևույթ էին խորհրդային հասարակարգում, իսկ դրանց «յոթերորդ այիքը» նոր էր սկսվում²։ Սակայն օրերը ամիսներ դարձան, ամիսները՝ տարիներ։ «Վարչակարգի հանդէպ ատելությունը, կենսապայմանի դառնությունը եւ կոչումին խորապէս գիտակից արժանատու գրագէտի հպարտութիւնն ու յանձնառութեան տրամադրութիւնը, փոխնիփոխ՝ անելի կամ նուազ շեշտումով, կ'երեւին բոլոր օրագրային գործերուն մէջ»³, - սա փաստում է, որ Լեռ Կամսարի օրագրային նշումները այսօր ուշադրության կենտրոնում են նաև Սփյուռքում։

Բնականաբար, Լեռ Կամսարի օրագրությունները տարբեր ժամանակների ծնունդ են, թեև տպագրվածները մեկը մյուսի օրգանական շարունակությունն են՝ ըստ ժամանակագրության, սակայն։ սրանցով չի ամբողջանում գրողի օրագրությունների շարքը։ Պետք է նշել, որ օրագրելը Լեռ Կամսարը ժամանակ առ ժամանակ դադարեցրել է՝ պայմանավորված որոշակի հանգամանքների առկայությամբ /և կամ թե բացակայությամբ/։ Ահա սա է նաև պատճառներից մեկը, որ օրագրությունների տարիները չունեն ամբողջական պատկեր։ Իսկ մյուս կողմից էլ՝ նրանց մի մեծ շարք դեռ մնում է անտիպ, թեև միննույն է, բացակայող էջերի մեծ քանակը անխուսափելի է /պատճառները՝ երևանի՝ 1946թ. ջրհեղեղ, ձեռագրերի բռնագրավում, ոչնչացում, իսկ մի մասն էլ մկների բաժին է դարձել/։

Մեր ուսումնասիրության շրջանակները, հասկանալի է, չեն ընդգրկում անտիպների «ներփակ համակարգը»։ ամեն ինչ մնում է ժա-

¹ Լեռ Կամսար, Բանտիս օրագիրը, Եր., 2010թ., էջ 39։

² Գուրգեն Մահարի, Սիրիրականը, Աշխատասիրությամբ՝ Գրիգոր Աճեմյանի, Եր., ԵՊՀ հրատ. 2009թ., էջ 3։

³ Լեռ Կամսար. Մարդը՝ գործին մէջէն, Յարութիւն Լ. Քիրքեան, «ՎԷՄ», թիվ 4(36), VEM Pan-Armenian Journal« Աթէնք, Գոկտեմբեր, 2011։

ռանգների տրամադրության տակ և հայեցողությամբ: Ինչպիսիք, առայժմ սահմանափակվենք օրագրությունների միայն այս փոքրիկ մասը բացահայտելու համեստ փորձով՝ լիահույս լինելով, որ հնարավոր կլինի մոտ ժամանակներս լույս սփռել նաև օրագրության մյուս՝ արդեն տպագրված ժողովածուների հետաքրքրական բովանդակության վրա:

Այն տարիներին, երբ ամնախաղեպ մի օրինաչափությամբ սահմանված էր արգելված գրականության հսկայական ցանկ, Լեռ Կամսարի կենդանության օրոք տպագրված բոլոր երեք գրքերի վերնագրերն էլ ցանկում ներառված էին /«Անվավեր մեռելներ» /Ֆելիետոնների ժողովածու՝, «Ազգային այբբենարան» /ժողովածու/, «Կրիպած արցունքներ» /Ֆելիետոնների ժողովածու //: Ահա թե ինչու, անտրամաբանական կլիներ, եթե դրանց կողքին, ասենք, թույլ տրվեր գրողին՝ երևան հանելու ամենօրյա մտորումներն ու խոհերը՝ օրագրության տեսքով: Մի հանգամանք էլ շեշտենք. համենայն դեպս մեզ համար դեռևս չբացահայտված է մնում, թե գրողը, այնուամենայնիվ, օրագրությունները ներկայացրել է տպագրության և մերժվել, թե՛... Թեև առաջինը խիստ անհավանական է թվում, երկրորդը՝ խիստ իրական: Սակայն մի փաստ առավել քան իրական է. բոլոր գրողների համար էլ, ովքեր օրագրել են, համենայն դեպս, անկեղծության ընկերը, մտերիմը, վկան... եղել են թղթի այդ պատառիկները: Իսկ Լեռ Կամսարի օրագրությունները, լինելով յուրաքանչյուր օրվա թե՛ կենցաղային, թե՛ սոցիալական և թե՛ քաղաքական իրադարձությունների «փաստացի արձանագրությունները», միաժամանակ յուրատեսակ հրապարակախոսություն են. նյութերը բովանդակությամբ այդպիսին են, միայն թե բացառության կարգով այդ օրերը գրողը հրապարակախոսում է միայն այսօր՝ մոտ մեկ դար անց: Թեև /ահա գրողի գրչի մեծությունն ու տաղանդը/ նրա առաջ քաշած որոշ հարցեր այսօր էլ զարմանալիորեն արդիական են հնչում և միշտ էլ կմնան այդպիսին: Խոսքը հատկապես նրա՝ աֆորիզմի արժեք ունեցող մտքերի մասին է, ժամանակաշրջանի քաղաքական ու մշակութային անցուդարձին վերաբերող հարցերի, ինչպես նաև հասարակական, մարդկային հարաբերությունների մասին և մարդասիրության /սրանք նաև համամարդկային արժեքներ են/: Իրական դեպքերը, իրական դեմքերն ու իրադարձությունները ապահովում են նյութի պատմականությունը: Տրվում են անուններ, որոնք հանրաժանաչ են, հայտնի բոլորին՝ թե՛ դրական, թե՛ բացասական հատկանիշներով: Ուրեմն, գրողը նաև ժամանակի վավերագիրն է եղել և պատմության տարեգիրը: Ինչ խոսք, ցավը նրանում է, որ այդ արժեքները լույս աշխարհ են գալիս միայն այսօր՝ ի հակադրություն վերը ասվածի՝ գուցե թե նաև ինչ-որ չափով կորցրած

¹ Տե՛ս Դ. Գասպարյան. Փակ դռների գաղտնիքը, եր., 1994թ., էջ 198-214:

այն կարևոր ուժը, կենսաէներգիան, որ կունենային այն օրերին: Ու թե-
րևա հնարավոր լիներ փոխել ինչ-որ բան և օգնել «ժամանակին»՝ խու-
սափելու ինչ-ինչ սխալներից:

«Մեկ ուզում եմ վերջ տալ օրագրիս և գրիչս վայր դնել, քանի որ նրա
հրատարակումը չենք տեսնի, մեկ էլ ասում եմ՝ գրեմ: Մեկ չէ՞: Մտքերս
փոխանակ ինձ հետ գերեզման տանելու, թող թղթի վրա գերեզման
մտնեն...»¹, - գրողի այս և մի շարք այլ խոհեր կարծես թե հուշում են, որ
նա միտք էլ չի ունեցել «գրական մենախոսությունը» հանձնել տպագ-
րության, բայց և բացառված չէ, որ դրանք այնտեղ մերժված լինեն:

Թերթում ենք մեր ժամանակի մամուլը: Գրողի կյանքի և ստեղծագոր-
ծություն մասին արձագանքներ ու մեկնաբանություններ՝ որքան ասես.
բացված է գաղտնիության և դրանով էլ՝ առեղծվածային լինելու շղար-
շը: Մի հատուկ ձեռքով ասես մամուլն էլ է բաժանված երկու մասի, ինչ-
պես այդ տարիներին անգամ ժամանակը՝ ... առաջ և հետո, իսկ
առաջին հերթին՝ մարդկային ծակատագրերը և կենսագրությունները:
Սակայն նույն այդ երկատված ժամանակը պիտի բուժեր բոլոր վերքերը
/ինչպես ասում են/՝ վերագտնելով ու լրացնելով ինքն իրեն: Իսկ «ժշմար-
տությունն այն էր, որ իսկապես նրանք չէին ուզում հաշտվել մեռնող
մտավորականների մահվան հետ: Ուզում էին իրենց ձեռքով ոչնչացնել
նրանց: Նրանք գիտեին իրենց առաջնորդի «ընտիր ծաշակը»: Աներևա-
կայելի այս սկզբունքով էին առաջնորդվում մարդիկ, որոնք իրենց նույն-
պես առաջնորդ էին համարում»²: Եվ Լեռ Կամսարի ծակատագրին
արժանացած ևս մի գրող, երբ չափազանց պարզ, հռետորական մի
հարց է տալիս՝ «...Ի՞նչ եք անում, տղաներ, ինչո՞ւ հեռու չեք նայում, ախր
պատմություն կա, պատասխանատվություն կա...», հնչում է նույնքան
հռետորական պատասխանը. «Քանի մենք կանք, պատմություն չի լինի,
իսկ երբ պատմությունը լինի, մենք չենք լինի»³:

...1955 թվականին Լեռ Կամսարն արդարացվեց: Բռնադատվածնե-
րից ոմանք, ամփոփելու նման այդ տարիները և ապրելու համար հենա-
րան գտնելու հույսով բարձրաձայնեցին. «Մենք հասկացանք, որ
ժողովուրդը գիտե մեզ մեր իրական արարքներով և ոչ թե մեզ վերագր-
վածներով: Եվ զգացինք, որ ուժեղացանք, մեր մեջ ամրացավ ջարդվե-
լու պատրաստ մեր ներքին սյունը: Եվ մենք լցվեցինք անսասան
հավատով, որ կվերադառնանք: Եվ վերադարձանք...»⁴: Իսկ մեծ երգի-

¹ Լեռ Կամսար, Կարմիր օրեր, եր., 2000թ., էջ 18:

² Վ Արամյան, Կոլիմա, եր., ԳՊՄ հրատ., 2006թ., էջ 49:

³ Գուրգեն Մահարի, Երկերի՝ ժողովածու, Հատոր 5, «Նորհրդային գրող», եր., 1989թ.,
էջ 175:

⁴ Մկրտիչ Արմեն, Պատվիրեցին հանձնել ձեզ. Հայպետհրատ, եր., 1964թ., էջ 310:

ծաբանը միայն գոհացավ իրեն ուղարկվածով /գոհացավ արդյոք/. «... Այսուհանդերձ ես բաւարարուած պիտի ըլլամ անով որ իմ անմեղութիւնը ինծի կը հաղորդուի իմ կենդանութեան ժամանակ: Իսկ ի՞նչ ընեն այն թշուառ դատապարտուածները որոնք իրենց անմեղութեան մասին կը լսեն... գնդակահարուելէ վերջ...»¹:

Շատ տարիներ անց գրողներն ու ընթերցողները պիտի հար զարմանային. մի՞թե հնարավոր է այդքան համարձակություն, կամքի ուժ, հումորի նուրբ զգացողություն և ապրելու այդքան հավատ մի մարդու մեջ, ով տխուր էր, ինքնամփոփ, դժբախտ թե՛ ընտանիքում և թե՛ գրական կյանքում:

Ենթադրվում է, որ օրագրելը Լեռ Կամսարը սկսել է 1917 թվականից՝ անմիջապէս Յոկոնսմբերյան հեղափոխությունից հետո կամ Յայաստանում բոլշևիկյան բռնապետությունը հաստատվելու ժամանակ²: Նշենք, որ այս հարցի հետ կապված կա որոշակի անհամապատասխանություն: Եթե ավելի վաղ տպագրված ժողովածուում /2000թ./ նշվում է գրողի՝ օրագրությունը սկսելու վերոհիշյալ թվականը, ապա արդեն մյուս՝ «Մահապուրծ օրագիր» և «Սոցիալիզմի Սահարա» ժողովածուներում նշվում է 1925 թվականը՝ որպէս սկիզբ օրագրությունների, իսկ ավարտը 1965 թվականն էր՝ մահվանից մի քանի օր առաջ:

Մեծ երգիծաբանի՝ օրագրությունները սկսում են լույս աշխարհ գալ՝ չպահպանելով ժամանակագրական հաջորդականությունը /թերևս սուբյեկտիվ պատճառներով/: Ըստ գրողի ժառանգների՝ օրագրությունների անտիպ էջերը նույնպէս մեծաքանակ են: Ավելին՝ մեկ առանձին տարին կարող է լույս աշխարհ գալ որպէս մեկ գիրք՝ ի տարբերություն «Մահապուրծ օրագրի», որն ամփոփում է շուրջ տասը տարվա օրագրություն: Սակայն, շրջանցելով օրագրությունները լույս տեսնելու հերթականությունը, դրանց մասին պետք է խոսել՝ նկատի առնելով ժամանակային հաջորդականությունը:

Գրողի կյանքի ավելի վաղ շրջանի տարիները արտացոլված են «Մահապուրծ օրագիր» գրքում՝ 1925-1935թթ. /եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2008թ./: Հիմք ընդունելով 1925 թվականի օրագրության /Չորեքշաբթի 20/ առաջին տողերում հեղինակի արտահայտած միտքը, առավել հակված ենք այն կարծիքին, որ գրողը սկսել է օրագրել հենց այդ թվականից: Ուրեմն, այստեղից էլ սկսվում է օրագրությունների ծանապարհը, ուստի պետք է կարևորել առաջին քայլը, միտքը, պարբերությունը. «Չորեքշաբթի 20.- Դեպքերը կսկսին ահավոր դառնալ: Չարձա-

¹ Ռ. Յատտէճեան, Յուշատետր-67, Պտոյտ հայ գրականութեան քուլիսներում մէջ, Յատոր Թ., Լեռ Կամսար՝ այս անժամօթը, Իսթանպուլ, 2010թ., էջ 179:

² Տե՛ս Լեռ Կամսար, Կարմիր օրեր, եր., 2000թ., էջ 3:

Ուստի այս օրվան ձեռք կառնեն գրիչը՝ գրելու օրը օրեն պատահածը, հաճախ պատահեցնելու նաև չպատահածը»¹, - ուրեմն գրողը նաև ցանկացել է օգնել հետագայի պատմաբաններին՝ դառնալով իր ժամանակի վավերագրողը: «Ասիկա այլևս երգիծանք չէր, - իրավացիորեն նշում է գրականագետ Ռ. Հատտեժյանը, - այլ իրականութիւն, որովհետև իսկապէս կարելի էր գրել բոլոր այն բաներուն մասին որոնք պէտք է պատահէին, բայց չէին պատահեր»²: «Մահապուրծ օրագիրը» նախապես գրողը վերնագրել է «Խորհրդային քաղաքացու օրագիրը»³, հետագայում այն վերանվանվում է՝ նկատի ունենալով բազմաթիվ փորձությունները, որոնց միջով անցնելով և մահից փրկվելով, էջերը հասել են մեզ: Օրապատումը գրված է եղել թղթերից կարված նոթատետրում կամ առանձին թերթիկների վրա՝ առանց մաքրագրվելու. գրողը հույս ուներ, որ հապշտապ ուրվագծված նյութերի վրա կարող է կրկին աշխատել: Օրագրությունների այս թվի թերթիկները, որոնք վնասվելու պատճառով անընթեռնելի են դարձել, գտնվում են Գրականության թանգարանում: Գիրքը տպագրվել է Լեռ Կամսարի ծննդյան 120-ամյակի առթիվ: «Մահապուրծ օրագիրը» ժմարտացիորեն արտացոլում է բանվորագրողացիական երկրի ստեղծման առաջին քայլերը /1925-1935թթ./: Եվ արժանի է մեծ գաղափարն է՝ երբեք չի կարելի բռնի ուժի միջոցով երջանկացնել մարդկանց, որովհետև «Մարդը երջանիկ է այն ժամանակ միայն, երբ ազատ է մտածում: Չե՞ք հավատում՝ հարցրեք մարդկությանը»⁴: սա արդեն հեղինակի բավականին համարձակ ձայնն է, որ անգամ այսօր հնչում է որպես ասույթ՝ պահպանելով կարևորությունը նաև բոլոր ժամանակների համար:

Ներկայացնելով «դուրսի» աշխարհի իրադարձությունները՝ երգիծաբանը մի շաբաթ օր գրում է. «Թեև կտրված ենք դուրսի՝ աշխարհեն ու կապրինք խորհրդային սնդուկին մեջ, բայց բանալիին ծակեն անգամ կերևի, որ քաղաքական հորիզոնին վրա բաներ մը կանցնին կդառնան»⁵: Չեկա անունը ժամանակի թելադրանքով հաճախակի է հանդիպում: Ահավասիկ մեկ հատված՝ կապված ներքաղաքական իրադրության հետ. «Չեկան, երբ բոլոր «գերագույն պատժի» արժանիներուն կզնդակահարե անխտիր կերպով, սաստիկ կսխալի իր հաշիվին մեջ:

¹ Լեռ Կամսար, Մահապուրծ օրագիր, /1925-1935/, եր., 2008թ., էջ 14:

² Ռ. Հատտեժյան, Յուշատետր-67, Պտոյտ հայ գրականության քուլիսներուն մէջ. Հատոր Թ., Լեռ Կամսար՝ այս անձանօթը, Իսթանպուլ, 2010թ., էջ 26:

³ Լեռ Կամսար, Մահապուրծ օրագիր, /1925-1935/, եր., 2008թ., էջ 5:

⁴ Լեռ Կամսար, Կարմիր օրեր, եր., 2000թ., էջ 162:

⁵ Լեռ Կամսար, Մահապուրծ օրագիր /1925-1935/, եր., 2008թ., էջ 53:

Յուրաքանչյուր մարդ իրեն հատուկ «գերագույն պատիժն» ունի: Մեկի մը համար իր երեխաներու կորուստը կրնա «գերագույն պատիժ» համարվե, ուրիշի մը՝ իր սիրեկանն բաժնվելը, երրորդի մը՝ անզգամ կին ունենալը... Ինձ համար «գերագույն պատիժը» սա ռեժիմին մեջ ապրելն է՝ որուն դատապարտված եմ, սակայն, առանց հանցանք մը գործելու...»¹: Ժամանակի քաղաքական իրադարձություններին գալիս են միանալու նաև մահացու ախտերը՝ որպես վերջիններիս ամենատրամաբանական հետևանք. «Բժավոր տիֆը, տենտելով, որ Չեկան բանտերը սաստիկ լեցուցեր է ու մենակ չի կրնար կոտորել, բուքսիրի իրավունքով օգնության է հասեր: Բոլոր բանտարկյալները երկու հավասար մասի է բաժանված հիմա: Ամենեղներուն Չեկան կսպանե՝ մեղավորներուն՝ տիֆը...»²: 1929թ. գրողը, ասես շնչասպառ լինելով խորհրդային երկրում տիրող դրությունից, նշում է. «Այսօր Մոսկվայն եկող մը կը պատմե, թե հոն կառավարությունը ձեռք է զարկեր ութը նոր, հսկայական /գիգանտ՝ ինչպես իրենք կըսեն/ բանտեր կառուցելու: Բանտ՝ միակ գործարանը Ռուսաստանին մեջ, ուր «հումույթի» պակաս չի զգացվեր: Բայց ավելորդ աշխատանք է ատ: Վասնզի այս բանտ երկրին մեջ նորեն բանտ կառուցել՝ կնշանակե դիակ մը եղբայրական գերեզմանն հանել եւ առանձին տեղ թաղել... Մի՞թե սա պատիժ է»³: Այնուհետև «համոզելով» իրեն և դիմացինին՝ գրողը բացականչում է /1932թ./ «Ո՛հ, Չեկայի գոյությունը շատ անհրաժեշտ է: Հիմա, երբ երկնային դժխքի գաղափարը խունացեր է, ու այլևս ոչ ոք կհավատա այդ մտացածին հաստատույթնին, շատ անհրաժեշտ էր, որ գոյություն ունենար ռեալ դժխք մը, սարսափին գաղափարը մարդկության մտքեն չանհայտանալու համար: Այս երկու դժխքներու մեջ ոչ մեկ տարբերություն: Երկու տեղն ալ նույն սատանաները իրենց սրածայր գլխարկներով ու դաժանությամբ: Միակ տարբերությունը, որ շատ փոքր է և չարժեր անզամ հիշատակել, այն է, որ երկնային դժխքին մեջ մեղավորները սովորաբար կտանջվեն, իսկ Չեկային մեջ՝ անմեղները...»⁴:

1935 թվականին լրանում է երգիծաբանի «զտման» չորրորդ տարին /1931-1935թթ./, թեև հեղինակը բերվելիք հատվածում նշում է իբրև եռամյակ: Գրողը, որ դեռևս չգիտեր, թե ինչպիսին է լինելու իր վաղվա օրը, վերհիշում է ոչ այնքան հեռու անցյալը՝ նշելով. «Այսօր կլրանա իմ «զտման» ու «ստուգման» եռամյակը: Ժիշտ երեք տարի առաջ, այսօր, ինձի բեմ հանած, կպոռային, կսպառնային ու կանպատվեին, որ «աշ-

¹ Նույն տեղում, էջ 126-127:

² Նույն տեղում, էջ 130:

³ Նույն տեղում, էջ 144:

⁴ Նույն տեղում, էջ 208:

խարհայացք» չունիմ: Որքան աղերսեցի, թե ի՞նչ ընեմ. աշխարհ չեմ ճանչնար, չեմ ծանցած, որ «հայացք» ունենամ վրան, չեղավ: Չէ՛, պիտի ունենաս: Առաջ դաշնակցական, ապա պիտի թքնես այդ «աշխարհայացքին» վրա ու ընդունես «մարքսիստականը»: Վա՛հ: Ինչե՛ր քաշեցի, մինչև հաջողեցա «աշխարհայացք» չունենալ՝ վերջապես...»¹:

1925-1935թթ. իրադարձությունները պատկերված են տիպիկ բնորոշումներով, երգիծական խոր ընդհանրացումներով, կծու ծաղրի մեծ չափաբաժիններով և այդ ամենը՝ քաղաքական ամուր հիմքով, ժշգրիտ փաստարկներով՝ բերված օրվա մամուլից, մեծ մասամբ՝ «խորհրդային Չայաստան» օրաթերթի էջերից: Թեև առաջին հայացքից առկա «գունային ֆոնը», «ճերբերանգը» կենցաղային, առտնին բնույթ է կրում, սակայն /հենց դա էլ խոսում է ի շահ հեղինակի/ ամեն ինչ տանում է դեպի քաղաքականը, այն էլ՝ նուրբ, սահուն, անցկատ անցումներով: ««Մահապարծ օրագիրը» թերևս կարելի է և վեպ համարել, և հերոսը Լեռ Կամսարն է՝ ժամանակաշրջանի ամենադրամատիկ ու ինքնատեսակ անհատականություններից մեկը... սա վեպ-մենախոսություն է...»²: Եվ քանի որ «գրողների օրագրերը, եթե դրանք տևական ժամանակ են ընդգրկում, դառնում են մի կյանքի շարունակական պատմություն, որի մեջ ակամա կերպավորվում է ինքը՝ հեղինակը՝ դառնալով վավերագրական գեղարվեստական կերպար»³, ուստի, լիովին համամիտ լինելով հոդվածագրի հետ՝ կարծում ենք՝ գրողի բոլոր օրագրություններն էլ յուրատեսակ ինքնակենսագրական վեպեր են:

2010 թվականին «Ամարաս» հրատարակչությունը լույս է ընծայում «Բանտիս օրագիրը» ժողովածուն՝ մախրողի տրամաբանական շարունակությունը, միայն բացակայում են մի քանի օրեր: Գրքում ներկայացվածը 1935 թ. բռնադատման իրողությունն է: Չեկայի նկուղում և կենտրոնական բանտում Լեռ Կամսարն օրագրում էր: Բանտում բոլոր բռնադատվածներն ունեին թուղթ ու գրիչ, որ բան է, թե խոստովանեին մեղքերը, մեղայականով խնդրագրեր հղեին պատժիչ օրգաններին և արժանանային ազատության: «Բանտիս օրագիրը» կազմված է երեք տետրերից: Գրողը դրանք բանտից ուղարկել է փոխնորդների հետ միասին՝ կնոջը զգուշացնելով. «Ձգույշ. փոխնորդներիս մեջ ոչի՛նք կան»: Իսկ բանտապետը չէր կարող հասկանալ, թե ինչի մասին է խոսքը. առաջին տետրի կազմի վրա գրված է եղել «1-ին կամեր, Լեռ Կամսարեն հանձնել ընկ. Սարաֆյանին», երկրորդի վրա՝ «Չանրապետական դա-

¹ Երկն տեղում, էջ 289:

² Երալյր Աղայան, Կամսար Լեռը, Գրական թերթ, թիվ 34 /2953/, 10 հոկտեմբերի, 2008թ., էջ 4:

³ Տե՛ս Վ. Գաբրիելյան, Գրավոր խոսք, երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Եր., 2007թ.:

տախազ ընկ. Պետիկ Թորոսյանին», իսկ երրորդ տետրը կազմ չունի¹: Այս օրագիրն ավարտվել է 1935թ. հունիսի 5-ին, երբ բանտային վարչությունը հավաքել է գրիչներն ու մատիտները: Գրողը դա հավաստում է՝ նշելով. «Այսօր նոր կարգադրությամբ մը բանտարկյալներեն վերցվեցավ թուղթն ու թանաքամանը: Վերջացնելով հուշատետրս՝ այսուհետև բանտարկվեմ անգիր...»²:

«Այսօր իմ դատս է: Դռնփակ: Առաջներ դռնփակ կըլլային այն դատերը միայն, երբ պետական գաղտնիք կար մեջը, կամ այնքան անբարոյական մանրամասներ պիտի բացվեին պրոցեսին, որին պետք չէր, որ ուրիշներ ներկա ըլլային: Իմ մեղադրանքիս մեջ ոչ այս կար, ոչ այն, սակայն գաղտնի պիտի ըլլար:

Դատարանը կպավ ակնջիս /?/ և հանուն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Կառավարության երեք տարի բանտարկության դատապարտեց ինձի...

Կվերադառնամ բանտ, այս անգամ արդեն դատապարտվածներու կամերը ու ծանր կնստիմ»³, - գրում է մի օր երգիծաբանը, ապա, չիմանալով իր մեղքը, որի համար դեռ երկար պիտի ապաշխարեր, հանգիստ ավելացնում է. «Ես, բանտարկյալս, այսքան օր դեռ չգիտեմ իմ հանցանքը: Ու բան է, եթե քննութենես վերջը պարզվի, որ արդար եմ, պիտի ապագային համար հանցանք մը գործելու օրդեր ձեռք բերեմ քննիչես...»⁴: Սրան ամենայն լրջությամբ հետևում է սեփական անձնային որակների բացահայտումը. «Որ կտանիմ լռությամբ իմ հանդեպ ցույց տրված բոլոր անարդարություններն այդ անկե է, որ կուզեմ չափել, թե մարդ արարածը որքան է «գայլ»: Ես անընդհատ խորացող ջրհոր մըն եմ, որ թույլ կուտամ թշնամիիս անվերջ իջեցնել իր դուլն՝ անոր պարանի ողջ երկարությունն ստուգելու համար»⁵: Համբերության մեծ պաշար, որին, անշուշտ, ավելացել է նաև հավատը, լավատեսությունն ու մարդասիրությունը: Հակառակ դեպքում նրան ոչ մի կերպ չէր հաջողվի ապրել ու նաև ստեղծագործել:

Նկատենք, որ, ուսումնասիրելով Լեռ Կամսարին բանտում թուղթ ու գրիչ տրամադրելու իրողությունը, բավականին հետաքրքրական մի փաստ գրավեց մեր ուշադրությունը. առկա են երկու տարբեր փաստարկներ՝ առաջինը՝ վերոհիշյալը, իսկ երկրորդը «Բանտիս օրագիրը» ժողովածուից մոտ տասը տարի առաջ լույս տեսած «Կարմիր օրեր» օրագրության մեջ կազմողը նկատում է, որ «բանտում Աղասի Խանջյա-

¹ Լեռ Կամսար, Բանտիս օրագիրը, Եր., 2010թ., էջ 6-7:

² Նույն տեղում, էջ 263:

³ Նույն տեղում, էջ 172:

⁴ Նույն տեղում, էջ 153:

⁵ Նույն տեղում, էջ 207:

նի /Խանջյանը եղել է Լեռ Կամսարի աշակերտը/ հատուկ կարգադրությամբ երգիծաբանը թուղթ ու մատիտ ուներ»¹: Հետագայում, փաստորեն նույն Աղասի Խանջյանի² օգնությամբ է Լեռ Կամսարը երեք տարի պահվել երևանյան բանտում: Իսկ երբ արդեն Խանջյանը չկար, երգիծաբանը տեղափոխվեց հեռավոր աքսորի՝ Վորկուտա: Ինչևէ, մի կողմից կարևոր հանգամանք է, թե արդյո՞ք բանտում գրողի համար ստեղծված էին առանձնահատուկ պայմաններ, մի փաստ, որը բավականին պարադոքսալ կլիներ, և որը կարող է առավել հետաքրքրական բացահայտումներ ունենալ, մյուս կողմից էլ՝ ի վերջո թերևս կարևոր այն է, որ հեղինակը կարողացել է գոնե որոշ չափով թերևացնել իր հոգեվիճակը, գուցե թե հնարավորինս պահպանել մարդկային դեմքը, ու թե՛ պատմականության և թե՛ գեղարվեստականության տեսանկյունից կարևոր ու մեծարժեք այս օրագրությունը այսօր դրված է ընթերցողներին և ուսումնասիրողների սեղանին:

Աքսորավայրում /Բասարգեչար, այժմ՝ Վարդենիս/ չեկիստների աչքից գրառումները թաքցնելու համար գրողը դրանք հորում է հարևանների հարդանոցներում, իսկ նոր գրածներն էլ անմիջապես թաքցնում է մեծ թռռան բարուրի մեջ՝ մովաթի տակ: Սակայն այս թաքստոցներն էլ ապահով չեղան. մի մասը մկներն են վնասել, իսկ մյուս էջերն էլ անընթեռնելի են դարձել, և հանձնված են Ե. Չարենցի անվան գրականության թանգարանին:

1953-1956թթ., ապա նաև 1958թ. արտացոլված են գրողի «Կարմիր օրեր» օրագրության մեջ /Եր., «Նաիրի» հրատ., 2000թ./: Գիրքը տպագրվել է մեծ երգիծաբանի մահվանից շուրջ քառորդ դար անց: Մինչ այս, գրողի ստեղծագործությունների կյանքում մեծ դադարի շրջան էր /նախորդ գիրքը՝ Լեռ Կամսար, «Երկեր»՝ 1988թ./: «Կարմիր օրերը» իրական երևակումն է բուլճակյան ամբողջատիրական համակարգի, հեղինակը չի թաքցնում իր վերաբերմունքը այդ բռնատիրության նկատմամբ: 1956թ. հունվարյան մի ուրբաթ օր գրողը նկարագրում է իր սարսափահար վիճակը. նա վերադառնում էր Չեկայից: Բայց ավելի լավ է՝ իր իսկ խոսքերով. գեթ մեկ-երկու շտրիխներ՝ ժամանակաշրջանի ուրվապատկերը առավել հստակ ստանալու համար: Նախ՝ օրագրի անվան մասին. «Ես իմ այս օրագիրը «Կարմիր օրեր» վերտառությամբ կնքեցի թեև, - ա-

¹ Լեռ Կամսար, Կարմիր օրեր, Եր., 2000թ., էջ 3:

² Աղասի Խանջյան /1901-1936/, խորհրդային կուսակցական և պետական գործիչ, 1917-ից զբաղվել է հեղափոխական գործունեությամբ, 1920թ. դաշնակցական կառավարությունը ձերբակալել է նրան և դատապարտել տասը տարվա բանտաքսորի, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո վերադարձել է մեծ քաղաքականություն: Տես նաև Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Եր., 1979թ., էջ 13-14:

սում է երգիծաբանը,- բայց գտնում եմ, որ կարելի է նաև «Մարդը տանու շորերով» կոչել: Ինչու որ ես այստեղ հանդես եմ գալիս այնպես, ինչպես որ կամ: Դրսից տուն մտնող մարդիկ, երբ ազատվում են իրենց արդուկած շորերից, վիզը խեղդող փողկապից, ձեռքի ազատ շարժումն արգելակող թևնոցներից, նկատում եք, ինչպե՞ս են հանգստանում: Իսկ ես իմ հուշատետրում, ներս թե դուրս, միշտ ման եմ գալիս իմ տանու շորերով և շատ հանգիստ եմ: Չե՛մ սարսափում, երբ մի կաթիլ յուղ է կաթում նոր կոստյումիս, իմ կոստյումը հին է, հաճախ մի քանի տեղից կարկատած, բայց թույլ է տալիս մեջը ազատ շարժվելու: Երկու տեսակ շոր հագնելը կեղծավորություն է՝ հավասար երկու երես ունենալուն...

Աշխարհում ամենագեղեցիկ բանը պարզությունն է ու անկեղծությունը¹: Այդ նույն անկեղծությամբ էլ գրողը ներկայացնում է իր ապրած ժամանակաշրջանը՝ կծու հումորով. «Մի խնդրեմ երեսիս նայեցեք՝ սպառ՞ծ եմ: Չեկայից եմ գալիս այս թոպեիս: Կանչել էին առաջս դնելու երեսունուրեք տարի առաջ «Հորիզոն»-ում գրած իմ մեկ ֆեյխետոնը Լեոնինի մասին և բացատրություն պահանջելու: Ես բոլորովին մոռացել էի դրա մասին: Երբ բացեց թերթն ու կարդաց հողվածը՝ մազերս բիզ-բիզ կանգնեցին: Այնտեղ գահընկեց Նիկոլայ ցարը հետևյալն է գրում իշխանություն գրաված Լեոնինին. «Մինչև օրս ես մտախոգված էի, թե ինձանից հետո չի լինի մեկը, ո՞ր շարունակի իմ բռնակալ քաղաքականությունը: Այսօր, սակայն, տեսնում եմ, որ հանձին քեզ ես ունեմ իմ արժանավոր ժառանգս: Ես իմ ողջ կյանքում աշխատեցի երկրից արմատախիլ անել բոլոր քաղաքական կուսակցությունները, բոլոր տարբեր մտածողներին, բոլոր ինքնուրույն մարդկանց, ջնջել խղճի, համոզմունքի և կրոնի ազատությունները և սակայն այդ ինձ չհաջողվեց, որովհետև իմ բռնության միջոցները պրիմիտիվ էին, նախնական, իսկ պատիժներս՝ տնայնագործական: Երկու տարին մեկ մի մարդ էի կախում՝ այն էլ փտած պարանով, պարանը կտրվում էր և, ըստ ընկալյան օրենքի, մահապարտն ազատվում էր: Երեք տարին մեկ մի տաժանակիր էի ուղարկում Սիբիր՝ ամենաշատը տասը տարով: Է՛, երեք տարին մի մարդ ուղարկելուց Սիբիր՝ կտաքանա: Իհարկե ո՛չ: Բայց հրձվանքով տեսնում եմ, որ դու պատիժը մեքենայացրել ու պուլեմյոտով մի թոպեում հարյուր հազարավոր մարդ ես փռում գետին: Հետո՝ այնքան շատ մարդ ես աքսորել Սիբիր, որ «բուլ» է բարձրանում այնտեղից, և աքսորականները, տաքությանը չդիմանալով, բաց են արել Սիբիրի դուռն ու պատուհանը, որ այրեցյալ գոտուց մի փոքր զովություն ներս թափանցի...:

Կարդաց Չեկայի նախագահը այս, ապա հարցական երեսիս նայեց, ասել ուզելով.

¹ Լեո Կամսար, Կարմիր օրեր, Եր., 2000թ., էջ 462-463:

- Այս գրելուց հետո ինչպե՞ս ես համարձակվել ողջ մնալ ամբողջ երեսունութ տարի:

Ապա հարցրեց.

- Չգո՞ւմ ես քեզ հանցավոր:

- Եստ սաստիկ,- պատասխանեցի:

- Հապա ինչպե՞ս է, որ դրանից հետո ապրում ես:

- Ապրում եմ, որովհետև շատ եմ հանցավոր: Այդպիսի հանցանք գործողը, երեսունյոթ տարի բոլշևիկյան ռեժիմում ապրելով, չի կարող իր մեղքերը քավել. ինձ մեան հանցավորը պետք է հարյուր երեսունութ, երկու հարյուր երեսունութ տարի ապրի այս ռեժիմում, որ կարողանա քավել իր հանցանքը...

- Այսքան անտանելի՞ ես համարում մեր ռեժիմը,- հարցրեց:

- Այո՛,- պատասխանեցի:

- Այդ դեպքում դու երբեք չպիտի մեռնես,- ոտը գետին զարնելով՝ գոռաց Չեկայի նախագահը և վեր կացավ:

Տուն եմ գալիս սոսկալի ընկձված: Միշտ ինձ մխիթարել եմ այն հույսով, թե մի օր կմեռնեմ, սրանց ձեռքից կազատվեմ: Ասացե՛ք խնդրեմ, սրանից հետո ինչո՞վ մխիթարվեմ...»¹: Թերևս այս մի ամբողջական օրվա նշումն էլ լիովին բավարար է՝ ցույց տալու երկրում տիրող իրավիճակը և միևնույն ժամանակ՝ գրողի վերաբերմունքը դրա նկատմամբ: Իսկ 1957 թվականի զարմանային մի օր նա, ավելոծված իրադարձությունների փոթորիկներից, ասում է. «Ես խնդրում եմ ձեզ, ինձ թաղելիս բերանքսիվայր դնել հողը... որ այս կառավարության երեսը չտեսնեմ: Մի՛ երկմտեք. երբևէ ռեժիմը փոխվելիս, անգամ եթե ամբողջովին փտած էլ լինեմ՝ դարձյալ շուռ պիտի գամ մեջքիս վրա...»²:

Լեռ Կամսարի ժառանգների մոտ եմ գտնվում օրագրությունների 1940-1965 թվականների էջերը:

2009 թվականին ՀԳՄ հրատարակչությունը լույս ընծայեց «Սոցիալիզմի Սահարա» օրագրությունը, որն ամփոփում է 1959 թվականի իրադարձությունները /զարմանալիորեն օրինաչափ մի փաստ՝ իրադարձությունները՝ ուղիղ կես դար անց/: Գրողի ուշադրության կենտրոնում կրկին մարդն է, որ գործում է սովետական երկրում, սոցիալիստական ճամբարի արտաքին-և ներքին քաղաքականության մեջ: Հեղինակը խոսում է երկրի առաջնորդների իրական դեմքի և ժողովրդի հոգեվիճակի մասին: «Այս ժողովածուն ոչ այլ ինչ է, քան գարնան ակնկալիքով՝ ինքնազոհ, անմնացորդ, անողոք ընդվզում բոլշևիկյան անարդարության, ստի, կեղծիքի դեմ... Գործող անձը մարդն է, գործելու ասպարեզը՝ աշ-

¹ Նույն տեղում, էջ 101-102:

² Նույն տեղում, էջ 166:

խարհը և ողջ տիեզերքը»¹, - գրքի բովանդակությունը ժզգրիտ կերպով բացահայտում է գրողի ժառանգորդուհին՝ Վանուհի Թովմասյանը: «Տնկին երբ մի տեղից մյուս տեղն ես փոխադրում, պետք է փոքր լինի, չարմատակալած: Արմատակալած, հասակավոր ծառը փոխադրելիս տերևները սպանված նապաստակի ականջների նման կկախվեն, ու ծառը կթռչնի:

Ես ծնունդ եմ առել Վանում, այնտեղ արմատակալել երեսուն տարի: Երբ Առաջին համաշխարհային պատերազմը ինձ տեղահան արեց ու բերեց տնկեց Երևանում, արմատներիցս մեծ մասը մնաց Վանում հողի մեջ: Երևանում ես հինգ տարի ապրեցի թռչնած, իսկ երբ հանկարծ փչեց հյուսիսային խորշակ՝ բուշակվա՞մը, այդ թռչնած տերևներն էլ թափվեցին, ու ես մնացի չոփ չոր: Արդեն հետո պարզվեց, որ բուշակներին կանաչ ծառ հարկավոր չէ. նրանց հարկավոր են չորացած գերաններ, որ տախտակ քաշեն և նրանցից սոցիալիզմ «շինեն»: Մինչև անգամ «շինեցին» այդ սոցիալիզմը, բայց անհաջող: Սոցիալիզմի հատակի տախտակներն այնքան բացվեցին ու հեռացան իրարից, որ կապիտալիզմի մատը կմտներ մեջը: Երևի տախտակները թաց էին, և նրանք շտապել էին իրենց շինարարության մեջ: Այնուհետև «մատերիալը» լավ չորացնելու համար վերցրին ինձ, ուղարկեցին Վորկուտա, որպեսզի այնտեղի անվերջ փչող քամիները չորացնեն ինձ: Երեք տարի այդ քամիներից փչվեցի, բայց երևում էր, որ դեռ լավ չէի չորացել՝ իրենց ուզածը շինվելու համար: Դրա համար Վորկուտայից ետ բերին ու տասնհինգ տարի ինձ հանձնեցին Բասարգեչարի ոչ պակաս ահռելի քամիներին՝ փչվելու: Ու մինչև օրս փչվում եմ զանազան քամիներից, բայց ի մեծ ցավ մեր կառավարության, չեմ չորանում, չեմ արդուկվում և ուղղաձիգ դառնում նրա քառակուսի նպատակներին ծառայելու համար, ընդհակառակը՝ միշտ ավելի եմ ծամվում, խխունջ դառնում, գլուխս ներս քաշած, շունչս պահած՝ այս բուշակյան անմիտ քամու դադարին եմ սպասում՝ գլուխս դուրս հանելու համար...

Ես կոմունիստ չդարձա, բայց իմ շրջապատում՝ Ռուսաստանում, նրա երկու հարյուր միլիոն բնակիչներից յոթ միլիոնը կոմունիստական «ծառեր» են: «Ծառեր», որոնք սա քառասուն տարի ոչ ծաղկում, ոչ պտուղ են տալիս: Ունեն դեղին, ազազուն տերևներ միայն, թքով կպած են հողին...»², - կենսագրական մի ամբողջ երկար ու ձիգ շղթա է գեղարվեստորեն գծում հեղինակը՝ նկարագրելու համար բուշակյան անհաջող և անպտուղ շինարարությունը:

Օրագրությունների շարքը, ինչպես նշեցինք, գրողն ավարտել է միայն

¹ Լեռ Կամսար, Սոցիալիզմի Սահարա, Եր., ԳՊՄ հրատ., էջ 3, 4:

² Նույն տեղում, էջ 161-162:

1965 թվականին՝ մահվանից մեկ շաբաթ առաջ: Իսկ ընդհատում եղել է միայն սիբիրյան աքսորի տարիներին: «Մահապուրծ օրագիրը» ընդհատվել է գրողի ձերբակալության օրը՝ 1935թ. նոյեմբերի 25-ին /ըստ երևույթի, այս ամսաթիվը ՊԱԿ-ի թղթապանակի ամսաթվերի հետ չի համընկնում. հնարավոր է, որ այն փոխած և հարմարեցրած լինեն արձանագրություններին/¹, բայց հետո այն շարունակվել է երևանյան բանտում /«Բանտիս օրագիրը»/: Ի դեպ, բանտի օրագիրը սկսվում է հենց նոյեմբերի 26-ին, իսկ վերջինս էլ ընդհատվել է 1945-46թթ.: Թեև գրառումներ եղել են նաև աքսորում՝ իր «բարի ընկեր Դավիթ Ղարազյոզյանի... կռնակի վրա»: «Խեղճ մարդ, ժամերով կռանում էր առաջս և անմռունչ գրասեղանում»², պատմում է երգիծաբանը: Որոշ փաստեր, այնուամենայնիվ, հասել են մեզ, սակայն օրագրային այդ էջերը անհետացել են:

Այնուհետև երգիծաբանի օրագրությունը կոչվում էր «Չապրած տարիներ», ապա՝ համաներումից հետո՝ «Կարմիր ծիծաղ» և «Կարմիր օրեր»: Հրատարակված է միայն «Կարմիր օրեր»-ի մի մասը /1953-1958թթ./:

Ամփոփելով՝ ընդգծենք, որ Լեռ Կամսարի օրագրությունների արժեքը մի կողմից պայմանավորված է մեծ մարդասիրությամբ. չէ՞ որ մարդուն ստիպել կորցնել մարդկային դեմքը, նշանակում է նրան վերածել կենդանու, իսկ Լեռ Կամսարը իր խոսքերով ատելություն էր ներշնչում հենց այդ մեքենայի հանդեպ՝ ցանկանալով ամեն կերպ օգնության, աջակցության ձեռք մեկնել ՄԱԴԴԻՆ, մյուս կողմից էլ այս գործերը արժեքավոր են իրենց արդիականությամբ: Գրողի օրագրային նյութերի մյուս արժանիքն այն է, որ յուրաքանչյուր «օրը» նա դարձրել է փոքրածավալ մի պատմվածք, հետաքրքրական ավարտով մի նովել՝ իբրև ամփոփում «թավ տառերով ընդգծելով» հիմնականն ու էականը:

Գրողը՝ որպես պատմագիր և վավերագիր, իր ուրույն ձեռագիրն է թողել հայ գրականության՝ հատկապես օրագրային ժանրի ստեղծագործությունների էջերում: Իսկ նրա օրագրություններին բնորոշ հատկանիշն այն է, որ փոքրիկ՝ մեկ-երկու պարբերությամբ՝ օրվա իրադարձությունների գրառման մեջ կարողանում է կյանքի ամենատարբեր ոլորտների մասին միմյանց լիարժեքորեն միահյուսված մի քանի մտքեր արտահայտել: «Կարելի է միայն զարմանալ և հիանալ, թե նա ինչպիսի ճկունությամբ և վարպետությամբ է մի տասը տողանոց ֆեյխտոնում կարողանում միանգամից անդրադառնալ մի քանի խնդիրների, ընդ որում՝ իրար

¹ Տե՛ս Լեռ Կամսար, Բանտիս օրագիրը, Եր., 2010թ., էջ 56:

² Լեռ Կամսար, Կարմիր օրեր, Եր., 2000թ., էջ 411-412:

հետ կապ չունեցող»¹: Այս նույն «հնարքը» գրողը կիրառում է նաև օրագրություններում՝ ասես բնագրաբար, առանց ավելորդ ջանքեր գործադրելու: Ու «փոքրիկ երկրի փոքրիկ խրճիթից գեղազետը հայացքը սևեռել է համայն աշխարհին...»²: «Օրագրություններում Լեռ Կամսարն իր կենսագրությունից շատ տխուր ու ողբերգական դեպքեր է հիշում, որոնք առանց սարսուռի հնարավոր չէ կարդալ: Կ. Մարքսի «Կեցությունն է բնորոշում գիտակցությունը» թվում է անվերապահ պիտի ընդունել երգիծաբանը: Բայց նա այդ արքսիոման չի ընդունում. երբ փորձում է համեմատել ի՞ր կեցությունն ու գիտակցությունը, կանգնում է ճակատագրական հակասությունների առջև...»³ /«Չլինի՞ հանկարծ ճիշտ է Մարքսի ասածը թե՛ կեցությունը որոշում է գիտակցությունը: Հանկարծ եթե նյութականս լավանա, և ես սկսեմ գովել մեր կառավարությանը, ի՞նչ կլինի իմ վիճակը...»⁴, ««ահ ու դողի» մեջ է գրողը/։ սրանք արդեն գրողի տաղանդի գնահատման մերօրյա բնորոշումներն են: Կենսագրական բազում մանրամասներ կարելի է իմանալ օրագրություններից, ըստ որում, գեղարվեստական մշակվածությամբ, թեև գրողը գործերի մշակումը թողել է հետագայի համար, ինչն այդպես էլ ժամանակ չի ունեցել անելու: Ակամա մտածում ես՝ եթե այս գործերը այսքան մեծարժեք են դեռևս «անմշակ», ապա ինչպիսին կլինեին, եթե գրողը հնարավորություն ունենար զոնե մեկ անգամ հետադարձ հայացք նետելու դրանց:

Կամսարյան օրագրությունների շարքն ամփոփենք իր՝ կամսարյան խոսքերով, որոնք պարզ են և պարզության մեջ՝ լայնաբովանդակ. «Այժմ մի քանի խոսք այն մասին, թե Հայաստանի այն ժամանակվա ղեկավարությունը ինձ երեք տարի ուղղիչ լազեր ուղարկելով ու 15 տարի քաղաքից վտարելով, հետևաբար, մոտ քսան տարի ինձ լռության դատապարտելով օգուտ ստացավ: Ոչ մի: Իսկ վնաս՝ ինչքան ուզեք: Ես իմ ժանրի մեջ ներկայիս միակ և հայ ժողովրդից սիրված հեղինակ եմ... Քսան տարվա մեջ ես քսան հատոր աշխատություն կարող էի տալ և հարստացնել հայ գրականությունը: Ուրեմն տեսեք թե վնասը որքան հասարակական է ու որքա՛ն անդառնալի...»⁵:

¹ Լեռ Կամսար, Կարմիր օրեր, Եր., 2000թ., էջ 7:

² Ծիծաղ պարզևող մարդը, Կանուխի Թովմասյան, Լեռ Կամսար, Կարմիր օրեր /առաջաբանը/, Եր., 2000թ., էջ 9:

³ Պարոնյանի և Օտյանի ազգակից Լեռ Կամսարը, Ս. Մուրադյան, Գրական հանգրվաններ, Գիրք Բ., Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2007թ., էջ 83:

⁴ Լեռ Կամսար, Կարմիր օրեր, Եր., 2000թ., էջ 201:

⁵ Տե՛ս ՀՍՄՀ Հանրապետական դատախազության քննիչին՝ 1935 թվի իմ բանտարկության առթիվ ինձ առաջադրված մեղադրանքների մասին, Լեռ Կամսար, Բանտիս օրագիրը, Եր., 2010թ., էջ 124-130: